# Յիշատակարան

Հայկազեան Հայագիտական Հանդէսի 2023 տարուան երկու գիրքերու խմբագրման եւ հրատարակման միամեայ աշխատանքներուն ընթացքին ականատես եւ ականջալուր եղանք համաշխարհային եւ հայկական քաղաքական իրադարձութիւններու, աննախընթաց դէպքերու: Արդարեւ,

Լիբանանի ընկերա-տնտեսական, քաղաքական անորոշութիւնը եւ նահանջը շարունակուեցան, Սուրիոյ կացութիւնը մնաց վատթար ու մանաւանդ Հալէպի հայօճախը ցնցուեցաւ երկրաշարժէն, որ հարուածեց նաեւ Թուրքիոյ միակ հայաբնակ Վագըֆ գիւղը:

Գրաւեալ Պաղեստինի, յատկապէս Կազայի դէմ իսրայէլեան յարձակումը խլեց շուրջ 21000 զոհ եւ այս պահուն մարդկային եւ սեփականութեանց դէմ աւերածութիւնը կը շարունակուի՝ Պաղեստին-Իսրայէլ հակամարտութեան ենթախորքին վրայ:

Արցախի խնդրով ականատես եղանք անոր աննախընթաց աղէտին՝ հայրենի այդ տարածքէն հարիւրքսան հազար տեղաբնիկ ցեղակիցներու ցեղային մաքրագործման:

Համաշխարհային առումով կը շարունակենք դառնալ մարդկային արժէհամակարգերուն նահանջներով, իրաւանց ոտնահարումներով, խօսքի եւ գործի անհաւատալի հակասութիւններով, մարդկային վսեմ իդէալներու խորտակումով:

Սակայն, ի հեճուկս վերոյիշեալ եւ այլ տագնապալի իրադարձութիւններուն, արձանագրուեցան նաեւ հպարտառիթ աննախընթաց դէպքեր:

Տիեզերք արձակուեցաւ հայկական արտադրութեան առաջին արբանեակը, հայ մարզիկներ համաշխարհային բարձրագոյն դիրքերու արժանացան, Հանդէսի աշխատակիցներէն Սուրէն Դանիէլեանի եւ Յակոբ Չոլաքեանի 75ամեակի հանդիսութիւնները նշուեցան, Վարդան Մաթէոսեան արժանացաւ Կիլիկիոյ Հայոց Արամ Ա. Վեհափառի Մեսրոպ Մաշտոց շքանշանին:

Լիբանանի հայօճախը շարունակեց ծաւալել մշակութային վառ գործունէութիւն: Լիբանանի եւ Սուրիոյ հայօճախները նշեցին իրենց շարք մը ազգային հաստատութիւններու հարիւրամեակը:

Հայկազեան Համալսարանը անցաւ իր 69րդ կրթաշրջանին 717 ուսանողներով, 91 դասախօսներով, 52 պաշտօնէութեամբ: Ան շարունակեց մարդակերտումի, լուսաւորումի, գիտահետազոտական եւ մշակութային իր առաքելութիւնը:

ՀՀՀի խմբագրակազմը շնորհակալութիւն կը յայտնէ Հանդէսի 2023 տարուան զոյգ գիրքերու աշխատակիցներուն, ու կը մաղթէ որ հայագիտութեան մշակները շարունակեն իրենց սատարումը հայագիտութեան:

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ**
Անդրանիկ Տագէսեան
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
Արշալոյս Թոփալեան, Արմէն Իւրնէշլեան, Սիլվա Փափազեան
ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ
Սիլվիա Աճէմեան, Նանօր Գարակէօզեան, Երուանդ Երկանեան, Արտա Էքմէքճի Հրանուշ Խառատեան, Մուրատ Հասրաթեան, Հրաչ Չիլինկիրեան, Մկրտիչ Պուլտուքեան, Սեդա Տատոյեան, Սուզըն Փեթի
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀՀՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Գրասենեակ